

պէս որ Ղազար կը տեսնէր «յամենեցուն ընթրիս՝ որպէս շեղջակոյտս ինչ ի վերայ միմեանց գերէոցն բազմութիւն», ու մթին բացատրութեամբ մը՝ «եւ զնոցուն զլսոց կարգմանց զառաջադրութիւն» (27-8), որ կը նշանակէ՝ անոնց տեսակով ու կարգով ի սեղան բերուիլը: Անասուններ կու գային նաեւ ազնուականաց արօտական հօտերէն (Մանդ. 74): Եւ թագաւորն իւր տաճարի առաւելագոյն սպառման համեմատ՝ ունէր յատուկ «զենարանս», յանձնուած նախարարի մը հոգածութեան (Խոր. 76). այս ինքն է սպանդանոցներ, ուր կը բերուէին անասունք արքունի փարախներէն, կամ որսացուածները, կը մորթուէին՝ կը մաքրուէին, եւ ապա խոհանոց կը տարուէին:

Մսեղէնք հիներուն քով կրնային եփուիլ «խորովեալ» կրակի վրայ (Եւք, ԺԲ, 8 եւն), կամ կատսնայով ու սանով (Բ Մնց. 13), եւ կը կոչուէին խորովոյք (Մանդ. ի Հյկզ.). եւ կամ «սխի՛ եփեալ ջրով» (Եւք. ԺԲ, 9), որոյ մէջ իսկ է իւր բացատրութիւնը: Բայց այս պարզ եփումը չէր զոհացներ մեր իշխանագունքը. այլ անոնց մսերը փափուկ եւ համեղ պատրաստութեամբ մը կը դառնային խորտիկք, որ այսպիսի կերակրոց ընդհանուր կոչումն